3562-4-2
F-15

2000

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԽՐԱՅԻ
ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Յովհաննու Յովսեփայ Քահանայեան մեծանուն Հրէի Բաբունեայ Եբրայեցւոյ 'ի գաւառին Ալամանաց.

Որոյ դաւանեալ զուղղափառ հաւատս՝ մկրտեցաւ հանդերձ այլ ևս հինգ գերդաստանօք, որպէս է տեսանել 'ի սոյն պատմուն շարադրեալ յայ յինքենէ 'ի լեզու Գերմանացւոց։

Թարգմանեալ 'ի մերս յինքեանս Եբրայեցւոյ 'ի Տէր Յովհ. Պետրոսեանց. Ի սպասաւորութեան Եպիսկոպոսաց յամի Տն 1797
'Ի ԼԻՒԼՕՒՆՕ։

28+322.1

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՎՍԵՓ Ռափտեքեան (Մոսէս Վէրանուանեալ նախ քան զմկրտութիւն իմ։) որդի Յովհաննու Վէնայ Ռափտեքեան, և Սարայի Վէնայ, ծնայ յամի Տն 1755. 'ի Կոնտրինհաուսոն քաղաքի մերձ 'ի Կոլոնիա 'ի վերին Գերմանիա։ 'Ի յուդայական գաւառանէ շառաւիղեալ ազգատոհմին իմոյ մեծապէս 'ի յարգի է ցեղ մեր առ Եբրայեցիս։ Յորժամ 'ի լոյս ընծայեցայ, հայրն իմ էր երևելի Ռաբբի Կուիլիօք և Պօսկնահանգացն Գերմանիոյ, այժմ քահանայապետ և գաւառապետ է կայսրընտիր գաւառացն Կոլոնիոյ, Տրէվիրայ, և սահմանացն կայսրընտիր Պալատինատայ։

Օնեղբ իմ 'ի մանկութենէ անտի իմոյ ընտրեցին զիս 'ի պաշտօն քահանայութեան. որոյ սէր և զամ կարելի խնամ տանէին 'ի դաստիարակել զիս, և վարժել 'ի մովսիսական օրէնս։

Երբև

Իբրև եղէ ամաց հնգետասանից, առաքեցին զիս յԵբրայեցի համալսարանն Ամէց քաղաքի 'ի Լօռենա, ուր մնացի ամս երկուս։ Յայնժամ առաքեցին զիս անտի յանուանի համալսարանն Բռակա քաղաքի 'ի Բռեմիա, ուր 'ի սակաւ աւուրս երևեցուցի մեծամեծ յառաջադիմութիս 'ի փիլիսոփայական և յաստուածաբանական ուսմունս եբրայականս, և գլխաւորաբար 'ի ծանօթութիւն գրեանց հին կտակարանաց։ Յայսմ համալսարանի ստացայ զմեծ անուն և զհամբաւ, և ընկալայ բազում պարգևս յարգանաց, յորոց ունիմ առ իս պահեալ մինչև ցարդ, բաց յայլոց՝ ևս և յայնց՝ զորս քահանայապետն նոյն Բռակա քաղաքի, և վարժապետք իմ ինձ տուեալ էին։

Իբրև եղէ քսան և մի ամաց՝ ձեռնադրեցայ քահանայ ըստ ծիսի և ըստ հրէական աւանդութեանց՝ 'ի ժողովրդանոցն Բռակայ՝ 'ի քահանայապետէ անտի Յոզեկիելէ Գևեայ. և 'ի հետևեալ աւուր շաբաթու՝ որ օր եօթնեւտասն էր Յուլիսի 1776 ամի, արարի զառաջին ատենարանութիւն իմ։ Օրինի ձեռնադրութեանս կոչեցայ առաջամայն 'ի հօրէ իմմէ 'ի տուն. ընտրեցայ Ռաբբի և օրինաց վարդապետ ժողովրդանոցաց Լիմերիկ, Ակսսէլ, Կրէվենպրօիկ, և Տուլքէն՝ շրջակայ քաղաքացն Կողոնիոյ։ Ընդ սկիզբն արարի յատենական բանս իմ եռանդագին

գագին Նախանձաւորութեամբ ընդդէմ զենիլ քրիստոնէական կրօնի։ Աստնայսորիկ վաղվաղակի ստացայ զմեծ յարգութիւն և զհամբու�առ քահանայապետս և առ բաբունիս (Լրբայեցւոցն) Գերմանիոյ. որք մեծամեծ գովութիւք բարձրացուցանէին զիս, սքանչացեալք՝ եթէ 'ի վերայ քաջ վարժութեան իմոյ 'ի գիտութիւնս, և եթէ 'ի վերայ նրբաքննին բացատրութեանց իմոց 'ի մեկնել զօրէնս։

Ո՛ այսքան պատիւ փքացեալ՝ ձեռներէց եղէ գրել ընդդէմ քրիստոնէական կրօնի։ Գիւրքն իմ շարադրեալ դժոխային չարութեամբ, և լե�եմ հայհոյութիւն, այնպիսի մեծ գուլասանութեի ընկալաւ 'ի քահանայապետաց՝ Ֆամպուրկ, Պերլին, և Ֆրանգֆորթ քաղաքացն, մինչև 'ի բանս քննութեան իւրեանց և հաւանութեան՝ զոր յաւելին 'ի նա, ետուն ինձ զպատուհանունս, Լոյս Խորհրդոյ։

Յամին 1780, 'ի քսանևչորսն Մարտի յորում աւուր՝ որովհետև ըստ Հրէից ամանդութեան կատարի տարեդարձ յիշատակի հանդստեան Մովսէսի (մարգարէի), յանձնեցաւ ինձ ատենաբանել ('ի ժողովրդանոցի) 'ի ներբող նորին Մովսէսի։ 'Ի սոյն ճառի՝ տուեալ ինչ 'ի յիսնևևերեքերորդ գլխոյ մարգարէութեան Եսայեայ՝ սեփականեցի սրբազան օրէնսդրին, զորոց զճշմարիտ միտս պարտ էր

 իմա-

իմանալ՝ի վերայ չարչարանաց Աստի փրկչին մերոյ։

Բայց յատենաբանել իմում զգացեալ՝ի յիս զնեղքին բուռն տհաճութի, սկսայ մտադիր լինել՝ի սրտի իմում, եթէ զինչդ մարթէ վերաբերել՝ի Անվախս զիմաստ ամի սոցա։ Այս է որ ինչ՝ի սոյն Գլ. ԺԴ.՝ի համարս

5. Նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց. և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց . . . . և ապրեցաք ի ծգիլեցաւ։

7. Իբրև զոչխար՝ի սպանդ վարեցաւ. և իբրև գառն անմեղաւն անմատոյց էր։

8. Նա խոնարհութիւնն ի դատաստան ի բարձեալ . . . . յանօրէնութիւնց ժողովրդեան նմա՝ի մահ վարեցաւ։

9. Եւ տայր զչարս փոխանակ գերեզմանի նորա. և զմեծամեծս փոխանակ մահու նորա.

Անվախս՝ ասէի ես՝ի սրտի իմում՝ „ ոչ մեռաւ վասն մեղաց մերոց . . . : Անվախս՝ ոչ „ իբրև զոչխար՝ի սպանդ վարեցաւ . . . : Նա „ ոչ մեռաւ վասն մեղաց մերոց . . . ոչ թաղեցաւ „ ՝ի մէջ հարստաց „ :

Այսպիսի և այլ սոցին նման խորհուրդք խառնէին յոյժ զմիտս իմ. վասն իբրև աւարտեցի զծառայն իմ, հետամուտ եղէ՝ի յոյզ այլ ինն մեկնութեանց այսր գլխոյ Եսայեայ. բայց ամ յոյզ և խնդիր իմ՝ի դեռևս եղանէին։ Յետ այ-

այսորիկ սկսայ քննել զամ ածաշունչ նը գիրս, և գտի մեծամեծ տարբերութիւն ընդ մէջ կրօնի իմոյ, և ընդ մէջ նախնի կրօնի հարցն մերոց։ Տեսի զ՝ըէայս ժամանակիս առանց թագաւորի, առանց առաջնորդի, առանց կառավարութեան, առանց տաճարի, առանց սեղանոյ, և առանց զոհի։ Զ՝ինչդ կարելի է՝ ասէի ցանձն իմ, թէ բարձի թողի արասցէ ած զժողովուրդն իւր, եթէ ժողովրդեանն չիցէ նախ բարձի թողի արարեալ զ՝լինելն ժողովուրդ ոյ։

Զ՝յսպիսի խորհրդոց և այլ բազմօրինակ մտածութեանց զուգընթաց եղեալ, մեծապէս երկբայեցուցին զիս զկրօնէ իմմէ՝ զոր մինչև ցայն վայր ամ նախանձու դաւանեալ էի, մինչև սկսայ լռելեայն լինել 'ի խնդիր այլ իմն ճշմարիտ կրօնի։ Յարեցայ անմիջապէս 'ի կրօնն մահմետական. բայց Ղուրան նորին ոչինչ այլ առաջարկէր ինձ, բայց եթէ ընդդիմութիւն հակառակ ուղիղ բանականութեան. և ոչ զայլ ինչ անդէն գտի բնաւ, բայց եթէ զնորաբուղխ աղբիւր երկբայութեանց։

Զայնմանէ՝ զոր կարծիս Քրիստոնէից կոչէի, և ոչ խորհել իսկ բնաւ կամէի։ Զ՝ու կարի դժուարին թուէր ինձ հաւատալ միրկչի միոյ խաչեցելոյ։ Զ՝ինչն զմտաւ ածելն՝ թէ ած եղև մարդ, և շրջեալ յաշխարհի աղքատութիւն մեռաւ 'ի վերջոյ, թուէր ինձ հակասութիւն իմն հա-

կա-

կառակ ուղիղ բանի, և միանգամայն տրամա-
չափապէս ներհական գաղափարի ճշմարիտ կրո-
նի՝ զոր կերպաւորեալ էի՛ի մտի։

Ի մէջ այսպիսի տագնապեալ խորհրդոց՝
սկսայ ընթեռնուլ զգրեանս Աղթէոի. սոքա
խորհուրդ բերէին՛ի միտս իմ հերքել զամ-
ազգ կրօնից։ Այանց ամ մի ողջոյն առանց առ-
նելոյ զայլ քննութիւն. բայց այսու ամենայն շա-
բունակէի ըստ բաբունեացն օրինի ուսուցանել
և քարոզել՛ի ժողովրդանոցս։ Այթէ ներքին
ինչ ազդեցութիւն ոչ ներկայացուցանէր հանա-
պազօր՛ի միտս իմ զէութիւն միոյն Աստ, զհար-
կաւորութիւն միոյ կրօնի, զհատուցումն վարձուց,
և զյաւիտենական դատապարտութիւն, գլորէի
արդեօք՛ի խորս անհաւատութեան։ Ա երջապէս՝ խռո-
վութիւն և ամբոխմունք մտաց իմոց՝ յորս վարա-
նէի, բարձին յինէն զառողջութիւն, և աւելի քան
զվեց ամիս ոչ ուրեք երևեցայ՛ի ժողովրդանո-
ցի։ Յաւուր միում յետ միջօրէի՛ի գնալն
ուրեք ամ ընտանեաց տանն յորում բնակէի,
և զգացեալ զիս սակաւ մի առողջ քան զառա-
ջինն, կայի առ դրան առ՛ի անցուցանել զժա-
մանակ՝ տեսութիւն անցաւորաց զբաղեալ։ Այ-
ահա կրօնաւոր ոմն՛ի կարգէ Բաբուչինաց
զկայ էառ խնդրել յինէն ողորմութիւն, որում և
ետու։ Որոյ անթարթ ակամբք յիս հայե-
ցեալ, եհարց ցիս՝ թէ արդեօք հիւանդ իցեմ.

որում

որում պատասխանի ետու թէ ոչ։ Կրկնեալ անդրէն կրօնաւորն՝ ասէ ցիս, թէ ոչ մարմնով գէթ սրտիւ և մտօք ստուգիւ հիւանդ ես։ Եւ այս բանք Նորա այնպիսի իմն ազդու զօրութիւն թափանցեցին յիս, մինչև չկարել զսպել զիս առ'ի չյայտնել Նմա որոշակի զտագնապ խորհրդոցս, ընդ որս հոգի իմ մարտնչէր։ Այլ առ երկիւղի, զի մի տեսցեն զիս քաղաքակիցքն ընդ Նմա, պայման եդաք 'ի միջի գտանել զմիմեանս 'ի տասներորդում ժամու 'ի նոյն գիշերի, խոստանալով Նմա յայնմ առանձին իսօսակցութեան յայտնել բոլորովին զկացութիւն հոգւոյ իմոյ։ Նկալաւ Նա յօժարակամ զեղեալ պայմանն. և անվրէպ 'ի ժամադրեալ պահու չոքայ 'ի տեղին՝ զոր սահմանեալն էաք։ Գանուցի Վաբուչին Հօրն անդէն զամ քննութիս՝ զորս արարեալ էի. և կենդանի իմն նկարագրութիւն ցուցի Նմա զամբոխումն սրտի՝ զոր կրէի 'ի խնդրելն իմ ճանաչել զճշմարտութիս, որոց ներկայացեալ մտաց իմոց 'ի միում վայրկենի, թուէր ինձ մեկնել նոցա անդրէն և հեռանալ յինէն, ոչինչ այլ թողեալ՝ բայց եթէ շփոթ ինչ երևակայութիւն՝ յորում վայրապար խնդրէի հանգիստ։ Յայտնեցի Նմա և զամ դժուարութիսն՝ զորս կրէի շուրջ զերբրայական կրօնիւ, և զանկարելութիսն՝ զորս տեսի 'ի մահմետականն. հուսկ ապա ծանուցի Նմա և

զխոր-

զնորհուրդն զոր եդեալ էր 'ի մտի հերքել զինչ և իցէ կրօն. բայց խոստովան եղէ ես թէ այս դիմամարտեր 'ի յիս լուսոյ բանին, և պատճառէր 'ի յիս զահ և զերկիւղ սոսկալի, և զսարսափ մահառիթ. մանաւանդ զի բռնադատեալ լինէի ես 'ի խորհրդոց իմոց հաւատալ՝ թէ հարկ է զի իցէ մի Աստուծ, մի ճշմարիտ կրօն. և հաստուցումն վարձուց, կամ պատիժ՝ յաւիտենական:

Յայնժամ Բաբուչին այսպէս հարցանէր ցիս՝ թէ յինչ միտս եմ արդեօք 'ի վերայ քրիստոնէական կրօնի. զրում պատասխանեցի թէ չեղև ինձ կարելի համոզել զիս հաւատալ՝ եթէ Յն նազովրեցի որ խաչեցաւն՝ իցէ մեսիա, ՈՒԾ, և փրկիչ մարդկան: 'Ի վերայ այսր գլխաւոր նիւթոյ սկսաք ընդերկար իմն խօսակցութիւն, որ տևեաց մինչև ցերկրորդ ժամ առաւօտուն: Խոստացաւ ինձ 'ի չուշել իւրում կրօնաւորն առաքել ինձ զնոր կտակարան մի, զոր և առաքեաց ինձ Հաղիւ ուրեմն զկնի միոյ եօթնեկի: Եւ առ պարտաւորելոյ զիս մտադրութիւն ընթեռնուլ զայն, գրեաց ես ընդ նմին՝ զի առաջարկեցից ինքեան 'ի գիր աւանդեալ զերկբայութիւնս իմ և զդժուարութիւս, զորս խոստանայր լուծանել ընդ ՈՒԾաբան վարդապետն Լոնդնիոյ:

Ընթերցումն նորոց կտակարանաց արդելեալ է առ Եբրայեցիս, և համարեալ իբրև զսեղանա-

նակատուրեան ինչ. յոյր սակս հրաժարեալ էի յընթեռնլոյ զայն՝ զի մի՛ ընդդէմ խղճի մտացս գործեցից. բայց յայնժամ առեալ ՝ի ձեռս զաբբաղան գիրքն զայն՝ սկսայ ընթեռնուլ ամ մտադրութ։ Վասն զկատարեալ համաձայնութեան ընդ մէջ հին և նոր կտակարանաց. տեսի յայտ-յանդիման զլրումն մարգարէութեանց ՝ի վերայ անձին Յսի Քրսի. և ծանեայ՝ եթէ նա է ճշմարիտ մեսիայն։ Բայլ ՝ի վերայ այսր ամի խոստովանիմ՝ եւ եթէ կրեցի մեծամեծ դժուարութիս ՝ի յաղթահարել զհնացեալ ատելութիւն, զոր՝ եթէ մարթ ինչ իցէ ասել՝ դիեցեալ էի ընդ կաթին անդստին ՝ի մանկութէ իմմէ՝ ընդդէմ սոյն այս Աշ մարդացելոյ։ Քաղցր անուանն Յսի, որ այժմ այսքան սիրելի է ինձ, դեռևս էր քար գայթագղութեան. և նախադատութեանց իմոց բռնացեալ՝ ՝ի վերայիմ առաւել ևս խստացուցանէին զսիրտ իմ։ Յանուցի զրով Քաբուչին Հօրն զամ դժուարութիս իմ՝ ՝ի վր քրիստոնէական կրօնի, և մասնաւորապէս ցատելութիւն զոր ունէի դեռևս ՝ի սրտի ընդդէմ Յսի զոր պաշտեմն։ Որոյ պատասխանին արդարև այնպէս ազդու եղև, մինչև լուսաւորեաց կատարելապէս զհոգի իմ։ Բայց մնայր ՝ի յիս տակաւին ինչ ինչ երկբայութիւն ՝ի վերայ խորհրդոյ ամենասրբ Երրորդութեան, ՝ի վերայ մարդեղութեան բանին, ՝ի վերայ ածութեան Յսի,

և 'ի վերայ գոյացափոխութեան, և այլն։ Եւ
'ի վերայ այսր ամի թողի այնուհետև խօսել
յատենի ընդդէմ քրիստոնէական կրօնի, և ոչ
ևս կամեցայ տալ ումեք յանիծեալ գրեանց
անտի իմոց, զոր տարածեալ էի կանխաւ,
որպէս վերադոյնդ ասացի։ Այլակ զբաղումն իմ
էր ընթերցանութի նորոյ կտակարանի, և այն՝
գրեթէ միշտ 'ի գիշերի. քանզի ահն՝ զոր 'ի
հրէից կրէի, արարեալ էր զիս երկչոտ. և
այսպէս՝ քրիստոնեայ էի 'ի գիշերի, և հրէայ
'ի տուընջեան։

Այս գիրք մեծագին պահէի մեծաւ զգուշութի ընդ փականօք, զոր և գաղտ ընթեռնուի։ Երբեմն մոռացայ առնել զայս զգուշութի. և դժբաղդաբար՝ Հրէայն յորոյ 'ի տան բնակէի՝ մտանէ 'ի սենեակն իմ, ձգէ զձեռն 'ի կտակարանն, և գտեալ անդանօր զանուն Յեսի Քրիստի, լցեալ խելացնոր կատաղութեամբ, դիմէ առ ժամայն ծանուցանել քահանայապետին զոր ետեսն։ Եւ քանզի արդէն յերկբայս էին, և ունէին զինէն կասկած, ըստ որում չէին լուեալ 'ի բազմաց հետէ և ոչ բառ մի 'ի բերանոյ իմմէ ընդդէմ քրիստոնէական կրօնի, յայն սակս՝ այս ամբաստանութիւն նոր նպաստաւորեալ յառաջին կարծեաց անտի զոր ապաքէն յղացեալ էին զեղանակէ մտածութենէ իմոյ, հաւատարմացոյց բոլորովին զաղգայինս

իմ

իմ թէ քրիստոնեայ եմ ես։ Պատնայսորիկ թը-
հէր ինձ՝ թէ ամենեքին առհասարակ միաբանեալ
էին ընդդէմ ինձ։ Ըստ զօրութեան իմ լքեալ
մեղկացաւ. և հաւատոց իմոց ոչ հաստատեալ
դեռևս ըստ բաւականին՝ առ'ի քաջասրտութիւն
'ի պայքար մտանել՝ որում զիսն պարտաւորէր,
մնացի բոլորովին ընկճեալ յերկիւղէ աստի իմ-
մէ։ Տեսեալ և զզարհուրելի հալածանս՝ զոր
ինձ սպառնային, պաշարեաց զիս ահ անհնա-
բին, մինչև ստիպեցայ ըստ օրինակի Պետրոսի
ուրանալ զփրկիչն իմ։ Ընդ այս սարսափելի
եղեռնս յաւելի ևս զստութիւն ինչ, և հաւա-
տարմացուցի՝ եթէ գիրքն այն պատահմամբ ինձ
գտեալ էր յիմում սենեկի։ Բայց ոչ բաւա-
կանացայ այսու. այլ կամեցեալ վերստին ստա-
նալ զպատիւն իմ զառաջին, և զմեծ հաւատս,
զոր կանխաւ ունէին զինէն արք ազգին իմոյ,
'ի հետևեալ աւուր շաբաթու արարի զպար-
սաւադիր ատենաբանութիւն ընդդէմ Յեսի
Քրիստոսի, լի բազմօրինակ հայհոյանօք առաւել
քան զայլ ամ՝ զոր յառաջագոյն արարեալ էի։
Ամոզեալ ապա Եբրայեցւոց՝ ետուն ինձ նո-
րանոր գովասանս և նշանս յարգանաց։ Եւ այն
ինչ ելեալ 'ի ժողովրդանոցէ անտի՝ իբրև
սկսայ խոկալ զոր արարի, ազդումն խղճի մտաց
իմոց՝ որ չև էր շիջեալ՝ ահարկու կշտամբանս
ինձ 'ի դէմն ածէր։ Ցա ներկայացուցանէր ինձ

զբո-

զբոսանդակ գարշութիւն մեղաց իմոց, հանդերձ սարսռմունքի մեծամեծ ցաւովք. մինչև 'ի ներքին խայթուածոց անտի մտացն խղճի՝ գտայ հարուածեալ անբժշկելի։ Անկայ 'ի յուսահատութիւն, եղեալ 'ի մտի՝ թէ չէ ինձ մարթ այնուհետև գտանել զթողութիւն Աստծոյ և 'ի փրկչէն իմմէ, զոր ոչ միայն յիմարաբար ուրացեալ էի, այլև ամ դիւահար բանիւք հայհոյեալ. գործ՝ որ անկ էր այնմ ևեթ որ խոպառ զուրկ էր 'ի բանականութենէ։ Խրաքանչիւր մտածութիւնք իմ նորանորատիպ յուսահատութենէ ինձ առաջի դնէին. քանզի դեռ չէի ծանօթ ըստ բաւականին անհուն մեծութենէ՝ գթութենէ, բարութենէ, և համբերութենէ նոյն իմոյ Յեսի։ Վասնորոյ լքայ բոլորովին՝ ընկճեալ յամի՝ զորօրինակ մարթ էր լինել, ընդ այսպիսի անողորմ և առաւել խժդժական յուսահատութիւն։ Խրև ուժգինս դղրդեցայ 'ի ներքին ամբոխմանց՝ որ յիսն զայրացան, անկայ 'ի դժնեայ իմն 'ի մելամաղձ թախծութիւն։

Հուսկ ուրեմն գթացեալ Աստ 'ի վերայ իմ, հաճեցաւ զարթուցանել 'ի յիս անդրէն զյիշատակութիւն ածային մարդասիրութեան իւրոյ, և թէ՝ չափ գթութեան իւրոյ անցանէ զանցանէ յանբաւս ըստ չափ անօրէնութեանց իմոց։ Հրամայել ինձ յուսոյ յաւել կենդանացուցանել զկիսամեռ սիրտ իմ. և փղձկեալ դառնա-

նազառն ցաւովք ողբալով, լացի զծանրութիւն մեղաց իմոց։ Աբատաւոնալիր աչքք, բեկեալ սրտիւ, զ զջացեալ անձամբ'ի ծունկս անկեալ՝ խնդրեցի պարզմտութեամբ ՅԻՅ'ի փրկչէն իմ մէջ զթողութիւն։ Ուխտեցի ոչ ևս հանդիսանալ'ի բաբաւնական գահոյս'ի մէջ Աղբայեցւոց։ Այլ զամ աւուրս կենաց իմոց՝ յորս մարթէր ինձ ապրիլ, նուէրս մատուցի Աստուծոյ, զոր հազիւ սկսեալ էի ճանաչել այնպէս՝ որպէս նա ինքն կամէր ծանուցեալ լինել 'ի մէնջ, և տայր ինձ ճաշակել զբաղցր և զկենարար զեղմունս շնորհաց իւրոց։ Ընդէն առնմին անկեալ առ ոտս նորին՝ առաջադրեցի հրաժարիլ յամէ, առնուլ ինձ'ի բաժին այնուհետև զկաշն, և հետևել փրկչին իմոյ։ Խոստացայ ևս թէ ոչ միայն քարոզեսցի'ի վերայ տանեաց հաւատալս իմ ամ վարդապետութեանն քրիստոնէական և ուղղափառ հաւատոյ, այլև՝ եթէ կարելի լինէր, կամ էր ինձ ծանուցանել ընդ ամ աշխարհ, և միանգամայն յայտնել ամ մարդոյ, թէ ես գաւանիմ զնոյն ճշմարիտ Աստն իմ, որ հաճեցաւ կոչել զիս 'ի փրկութիւն՝ յանակնկալ ժամու, և հրաշալի իմն եղանակաւ։ Այս մասնաւորապէս յայտեմ երջանիկ պահու եղի 'ի մտի՝ զի պարապեցայց 'ի բոլանդակ յետագայ կեանս իմ 'ի փութալ դարձուցանել զեղբարս իմ առ Աստ, որք կան թակարդեալ

դեալ 'ի ստուերս մահու, և թաղեալ 'ի վիհն կորստեան։ Պատնորոյ զամ զայս իմ ապաստան արարի յօգնականութիւն Ա՛յ, ակնկալեալ թէ նա ինքն օրհնեսցէ զամ զվ ստակս իմ։

Ազիւ թէ հաստատեալ էի 'ի խորհուրդս իմ այսպիսի բացորոշութիւք, ահա հանդարտեցաւ ալէկոծութիւն իմ մրրկախառն, որ այնքան բռնագոյնս զանձն իմ չարչարէր. և առժամայն 'ի սրտի իմում զգացի զխաղաղութիւն իմն աքանչելի՝ որում մինչև ցայն վայր անծանօթ էի։ Ուստի առաջին փոյթն իմ եղև ծանուցանել զայս ամ առ Ա՛յրն Լուդովիկոս որ է վերոյիշատակեալ Արաբուչին կրօնաւորն. և նա հրամայեաց ինձ չու առնել փութալ գնալ 'ի Կողոնիա։ Ոչինչ յապաղեցի ապա կատարել զպատուէր նր. վնորոյ և գտի շնորհս ընդունելոյ անդանօր զնբ խորհուրդն մկրտութեան յամին 1783, 'ի չորրորդ աւուր Փետրվարի։ Աւուրքք ինչ յառաջքան զմկրտուիմ գրեալ էի հօր իմում և տուեալ զտեղեկութիւն ընդգրկելոյ իմոյ ղքրիստոնէական հաւատս։ Ի նմին քարտիսի յառաջքերի ևս և զպէսպէս վկայութիս 'ի հին կտակարանաց, առ 'ի արդարացուցանել զդարձն իմ առաջի նր, և միանգամայն ակնունելով 'ի նա ինքն ազդել զայն փրկաւէտ ներգործութիս այսպիսի միջոցաւ։ Ա՛յլ աւաղ, զի նա առաւել ևս խստասրտեալ, ոչ զայլ ինչ պատաս-

տասխանի արար, բայց եթէ զչարամաղթութիւս ընդդէմ ինձ, և զառաւել զարհուրելի հայհոյութիւս ընդդէմ կրօնին զոր ընդգրկեալ էի։ Ի նմին քարտիսի իւրում առաջի արարեալ էր ինձ զպէսպէս առարկութիւնս, որոց փոյթ յանձին կալայ պատասխանել ամ ակնածութիւն. զի բաղձայի լուսաւորել զմիտս նորա նշուլիւք ճշմարիտ լուսոյ. և աւարտեցի զբանս իմ, մաղթելով 'ի ամէն, զի հաճեսցի ծանուցանել և նմա զճշմարտութիւն։ Այսմ երկրորդ ողջունագրի իմոյ պատասխանեաց հայրն իմ և ոչինչ։ Յետ այսորիկ ծանեայ՝ եթէ պատրաստեալ են ինձ դարանակալս՝ աւազակել բառնալ յերկրէ զկեանս իմ. և զայն՝ 'ի միոյ 'ի միաբանելոց անտի, որ մանաւոր նախախնամութեամբն Աստ յայտնեաց ինձ զմահաւորթ կամս նոցա։

Օրայսօրինակ փրկեաց զիս տէր 'ի ձեռաց թըշնամեաց իմոց, և ընկալաւ 'ի գոգ հարսին իւրոյ կաթողիկէ ուր Եկեղեցւոյ. և փառաւորեալ մայր նորա Կոյսն անարատ՝ ընդ իւրով ընկալաւ պաշտպանութիւն, և խնամակալ եղև ինձ յայնմ օրէ և առ յապա։

'Ի հրամայել ինձ գերապայծառ կայսրընտիր Արհիեպիսկոպոսին Կողմնիոյ՝ առնել ատենաբանութի ինչ ընդդէմ վարդապետութեանն՝ զոր կանխաւ ջատագովեալ և ուսուցեալ էի, կատարեցի զնորուն հրաման՝ եղեալ ընաբան զնոյն յիսն-

յիսնեւերեքերորդ գլուխն Լեսայեայ. որով երիւք ամօք յառաջ հաճեցաւ Ն. Ծ. լուսով հաւատոյ լուսաւորել զաչս մտաց իմոց։ Նոյնօրինակ և 'ի նմին աւուր հաճեցաւ ածոյին բարութիւն իւր գործի առնուլ 'ի ձեռին զբանս իմ առ 'ի կոչել 'ի քրիստոնէական հաւատս զՀինդ գերդաստանս՝ որք ամ ընտանեօքն մկրտեցան 'ի Կողզնիա յամին 1783. 'ի հնգետասաներորդ աւուր Փետրվարի։ Այլ ես աղաչեմ զՏէր մեր Յն Քն, զի հաճեսցի զկուրացեալ ժողովուրդ իւր, և մանաւանդ զապերջանիկ ընտանիսն իմ կոչել 'ի սոյն քրիստոնէական ուղղափառ հաւատս կամ ողիկէ. մինչև բոլոր Իսրայէլ հաւատասցէ, և նոմիրեսցէ զամ զփառս, զգովեստ, զյարգութիւն, և զպաշտօն Յնի Քնի մարդացելոյ, որ կենդանի է և թագաւորէ 'ի միութեան ընդ Հօր և ընդ սոյն Հոգւոյն 'ի յաւիտեանս.

Ամէն։